ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 65

«29» 03 2021 թ.

ք. Երևան

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նոր կորոնավիրուսի համավարակի պայմաններում ՀՀ դատախազության գործունեության բնականոն իրականացումը և ՀՀ դատախազության ստորաբաժանումներում սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խստիվ պահպանումն ապահովելու, նշված կանոնների խախտումների յուրաքանչյուր դեպքում արագ և առանց հապաղման արձագանքելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. **ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարին՝**

1) Ապահովել ՀՀ դատախազության ստորաբաժանումներում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող սանիտարական կանոնները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի <<Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ N 3.1.2-001-20 սանիտարական

կանոնները հաստատելու մասին>> 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանի հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված):

2) Սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո՝ անհապաղ, ստորաբաժանման աշխատակիցների մասնակցությամբ անցկացվող օպերատիվ խորհրդակցությունում քննարկել սույն հրամանը և Հավելվածը:

2. Հավելվածի՝

1) 7-րդ կետով նախատեսված պահանջների կատարումն ապահովելու պատասխանատու անձ նշանակել՝ ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ դատախազության անձնակազմի կառավարման վարչության պետին, իսկ ՀՀ դատախազության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներում՝ տվյալ ստորաբաժանումների աջակցող բաժինների (տարածքային բաժինների) պետերին:

2) 8-րդ կետով նախատեսված պահանջների կատարումն ապահովելու պատասխանատու անձ նշանակել՝ ՀՀ գլխավոր դատախազությունում ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ Համլետ Գրիգորյանին, իսկ ՀՀ դատախազության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներում՝ տվյալ ստորաբաժանման ղեկավարի կողմից սույն հրամանը ստանալուց հետո մեկօրյա ժամկետում նշանակված անձին:

3. **ՀՀ դատախազությունում հանրային պաշտոն (դատախազ և հայեցողական պաշտոն), պետական ծառայության պաշտոն, տեխնիկական սպասարկում իրականացնող և ՀՀ դատախազությունում պայմանագրային հիմունքներով աշխատանք կատարող անձանց՝**

Պահպանել Հավելվածի վերաբերելի պահանջները, այդ թվում՝ 2021 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած, ՀՀ դատախազության ստորաբաժանումների վարչական շենքեր աշխատանքի (ծառայության) ներկայանալիս սույն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված անձին ներկայացնել Հավելվածով սահմանված աշխատանքի (ծառայության) ներկայանալու համար անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:

4. **ՀՀ դատախազության անձնակազմի կառավարման վարչության պետին, ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների աջակցող բաժինների (տարածքային բաժինների) պետերին՝**

Սույն հրամանի 3-րդ կետով նախատեսված պարտականությունների առերևույթ խախտումներ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ զեկուցագրով հայտնել՝ դատախազների դեպքում առերևույթ խախտում թույլ տված դատախազի վերադաս դատախազին, իսկ մյուս աշխատակիցների դեպքում՝ ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարին:

5. **ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ՀՀ գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի, կայազորների զինվորական դատախազներին՝**

Սույն հրամանի 4-րդ կետով նախատեսված զեկուցագիրը ստանալուց հետո, այդ մասին անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հայտնել ՀՀ գլխավոր դատախազին՝ կցելով ներկայացված զեկուցագրի պատճենը:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

7. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

8. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ